

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

▶B Հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող ջրատաքացուցիչ կաթսաներին ներկայացվող արդյունավետության պահանջների մասին ԽՈՐՀՐԴԻ՝ 1992 թվականի մայիսի 21-ի 92/42/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ

(ՊՏ, L 167, 22.06.1992թ., էջ17)

Փոփոխվել է՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Համար էջ		ամսաթիվ
▶M1	Խորհրդի 1993 թվականի հուլիսի 22-ի 93/68/ԵՀ հրահանգ	L 220	1	30.08.1993թ. .
▶M2	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ հրահանգ	L 52	50	21.02.2004թ.
▶M3	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի 2005/32/ԵՀ հրահանգ	L 191	29	22.07.2005թ.
▶M4	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի 2008/28/ԵՀ հրահանգ	L 81	48	20.03.2008թ. .

▼B

«Հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող ջրատաքացուցիչ կաթսաներին ներկայացվող արդյունավետության պահանջների մասին» ԽՈՐՀՐԴԻ 1992 թվականի մայիսի 21-ի թիվ 92/42/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, և, մասնավորապես, դրա 100ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ 91/565/ԵՏՀ որոշմամբ (4) նախատեսվում է Համայնքում խթանել էներգետիկ արդյունավետությունը «Փրկության ծրագրի» շրջանակներում,

քանի որ կարևոր է խթանել մինչև 1992 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ներքին շուկայի աստիճանական ստեղծմանն ուղղված միջոցները. քանի որ ներքին շուկան ընդգրկում է առանց ներքին սահմանների տարածք, որտեղ ապահովվում է ապրանքների, անձանց, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժ,

քանի որ «Անդամ պետություններում էներգիայի խնայման ծրագրերը բարելավելու մասին» Խորհրդի 1985 թվականի հունվարի 15-ի որոշմամբ անդամ պետություններին առաջարկվում է ձգտել և երբ անհրաժեշտ է ավելացնել իրենց ջանքերը՝ էներգիայի խնայման ինտեգրացված քաղաքականությունների հետագա զարգացման միջոցով էներգիայի առավել ուսցիոնալ օգտագործումը խթանելու համար:

քանի որ Խորհրդի 1986 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը վերաբերում է Համայնքի՝ 1995 թվականի համար նախատեսված էներգաքաղաքականության նոր նպատակներին ու անդամ պետությունների քաղաքականությունների համապատասխանեցմանը, և, ի թիվս այլոց, վերջնական էներգիայի պահանջարկի արդյունավետությունը առնվազն 20%-ով բարելավելու նպատակին,

քանի որ Պայմանագրի 130Ժը հոդվածով սահմանվում է, որ շրջակա միջավայրին վերաբերող Համայնքի գործողությունները նպատակ են հետապնդում երաշխավորել բնական ռեսուրսների ողջամիտ և ուսցիոնալ օգտագործում,

քանի որ նպատակահարմար է հիմք ընդունել պաշտպանության բարձր մակարդակը անդամ պետությունների օրենքով, կանոնակարգով կամ վարչական ակտով սահմանված դրույթների համապատասխանեցմանն ուղղված և առողջությանը, ապահովությանը,

շրջակա միջավայրի պահպանությանն ու սպառողների պաշտպանությանը վերաբերող առաջարկություններում,

քանի որ Խորհրդի 1989 թվականի հունիսի 21-ի որոշմամբ հայտարարվում է, որ «Համայնքը պետք է պատշաճ կերպով հաշվի առնի ջերմոցային էֆեկտի հետ կապված հնարավոր կլիմայական փոփոխությունները» (7) և Խորհրդի 1990 թվականի հոկտեմբերի 29-ի եզրակացություններում նշվում է, որ 2000 թվականին CO2 արտանետումները պետք է կայունացվեն Համայնքի ներսում իրենց 1990 թվականի մակարդակով,

քանի որ զգալի է վերջնական էներգասպառման հիմնական մասը իրականացնող ներքին և սպասարկող հատվածի կարևորությունը,

քանի որ այս հատվածը կդառնա առավել կարևոր ավելի կենտրոնացված ջեռուցմանն ու ջերմային հարմարավետության ընդհանուր բարձրացմանն ուղղված միտումների միջոցով:

քանի որ կաթսայի առավել արդյունավետությունը բխում է սպառողի շահերից. քանի որ էներգիայի խնայողությունը կարտացոլվի ածխաջրածինների ներկրումների նվազեցման մեջ. քանի որ Համայնքի էներգակախվածության նվազումը դրական ազդեցություն կունենա դրա առևտրի հաշվեկշռի վրա,

քանի որ «նոր կառուցվող կամ առկա ոչ արտադրական նշանակության շենքերում տարածքի ջեռուցման և տաք ջրի արտադրության համար ջերմային գեներատորների օգտագործման մասին» և «նոր ոչ արտադրական նշանակության շենքերում ջերմամեկուսացման և կենցաղային կարիքների համար տաք ջրի բաշխման մասին» Խորհրդի 1978 թվականի փետրվարի 13-ի 78/170/ԵՏՀ հրահանգով բարձրացվել է անդամ պետությունների միջև էապես տարբեր արդյունավետության մակարդակների հաստատումը,

քանի որ ջրատաքացուցիչ կաթսաների նկատմամբ բարձր արդյունավետության պահանջարկը կնվազեցնի շուկայահանված տարբեր տեխնիկական հատկանիշներով **սարքավորումների տեսականին՝** այսպիսով հեշտացնելով սերիական արտադրությունը և ստեղծելով տարբեր մասշտաբի տնտեսություններ. քանի որ բավականաչափ բարձր մակարդակով էներգիայի պահանջներ սահմանող միջոցների բացակայությունը կարող է ներքին շուկայի ձևավորմանը զուգընթաց հանգեցնել ջերմային համակարգերի արդյունավետության մակարդակների զգալի անկման շուկայում ցածր արդյունավետությամբ կաթսաների տարածվելու միջոցով,

քանի որ տեղական կլիմայական պայմանները և շենքերի էներգետիկ ու բնակեցվածության առանձնահատկությունները մեծապես տարբերվում են Համայնքի ներսում. քանի որ այս տարբերությունը պետք է հաշվի առնվի անդամ պետությունների կողմից, երբ որոշվում են սույն Հրահանգի կիրառման համար կաթսաների շահագործման պայմանները. քանի որ այս հանգամանքներով հիմնավորվում է այն փաստը, որ երբ ջրատաքացուցիչ և բնակելի տարածքներում տեղադրվելու համար նախատեսված կաթսաները լայնորեն տեղադրվում են սույն Հրահանգի ընդունման պահին, անդամ պետությունները պետք է հատուկ սահմանափակումների շրջանակներում շարունակեն լիազորել այսպիսի կաթսաների շուկայահանումն ու շահագործումը. քանի որ այս միջոցառումները ենթակա են Համայնքի կողմից հատուկ հսկողության,

քանի որ կաթսաների արդյունավետության նկատմամբ տեխնիկական խոչընդոտների գնահատմանն ուղղված սույն Հրահանգը, պետք է հետևի Խորհրդի 1985 թվականի մայիսի 7-ի եզրակացությամբ(9) հաստատված նոր մոտեցմանը, որով, մասնավորապես, սահմանվում է, որ օրենսդրական ներդաշնակեցումը ԵՏՀ Պայմանագրի 100-րդ հոդվածի վրա հիմնված հրահանգներով պարտավորեցնում է սահմանել հիմնական պահանջներ, որոնց պետք է համապատասխանեն շուկայահանվող ապրանքները, և որ այս հիմնական պահանջները պետք է ձևակերպվեն բավականաչափ հստակ՝ իրավաբանորեն պարտադրող պարտավորություններ ստեղծելու նպատակով, որոնք կարող են կիրարկվել և լիազորել հավաստագրման իրավասու մարմիններին ստանդարտների բացակայության դեպքում ապրանքները հավաստագրելու այդ պահանջներին համապատասխան,

հաշվի առնելով տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի ոլորտում տեղեկատվական դրույթների ընթացակարգ սահմանող 83/189/ԵՏՀ (10) հրահանգը,

հաշվի առնելով տեխնիկական ներդաշնակեցմանն ուղղված հրահանգներում օգտագործման համար նախատեսված համապատասխանության գնահատման ընթացակարգերի տարբեր փուլերի մոդուլներին վերաբերող 90/683/ԵՏՀ (11) որոշումը,

քանի որ արդյունավետության պահանջներին համապատասխանող կաթսաները պետք է կրեն «CE» համապատասխանության դրոշմակնիք, և համապատասխան դեպքերում՝ կնիքներ՝ Համայնքի ներսում դրանց ազատ փոխադրվելու հնարավորություն տալու և նախատեսվող նպատակներին համապատասխան օգտագործվելու համար,

հաշվի առնելով «Շինարարական արտադրանքի վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» 89/106/ԵՏՀ (12) հրահանգը,

քանի որ սույն Հրահանգում նշված գազային կաթսաների համար պետք է սահմանվեն արդյունավետության պահանջներ՝ խթանելու համար «Գազային վառելիք օգտագործող կենցաղային տեխնիկային վերաբերյալ անդամ պետությունների իրավական նորմերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 29-ի 90/396/ԵՏՀ հրահանգով սահմանված էներգիայի ռացիոնալ օգտագործումը:

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգով՝ Համայնքի ներսում էներգետիկ արդյունավետությունը խթանելու վերաբերյալ «Փրկության ծրագրի» ներքո, սահմանվում է 4 կՎտ-ից ոչ ցածր և 400 կՎտ-ից ոչ բարձր ջերմարար հզորությամբ հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող ջրատաքացման նոր կաթսաների, այսուհետ՝ «կաթսաների» նկատմամբ սահմանված արդյունավետության պահանջները:

Հոդված 2

Սույն Հրահանգի իմաստով կիրառվում են՝

- կաթսա՝ կաթսայի մարմնի և այրիչի համակցված սարքվածք, որը նախատեսված է այրումից ստացված ջերմությունը ջրին փոխանցելու համար,
- սարքվածք :
 - կաթսայի մարմին որին ամրացված է այրիչ
 - այրիչ, որը ամրացված է կաթսայի մարմնին

-առավելագույն նոմինալ հզորություն (արտահայտված կՎտ-ով)՝ արտադրողի կողմից սահմանված և երաշխավորված առավելագույն ջերմարտադրություն, որը ստացվում է արտադրողի կողմից նշված արդյունավետ արտադրողականության իրականացմանն ուղղված շարունակական գործողությունների ընթացքում,

- օգտակար արդյունավետություն/արդյունավետ արտադրողականություն (արտահայտված %-ով)՝ վառելիքի հաստատուն ճնշման ներքո կաթսայաջրին և նվազագույն ջերմարարությամբ արտադրանքին փոխանցվող ջերմային հզորության և միավոր ժամանակում որպես վառելիքի ծավալ արտահայտված սպառման հարաբերակցությունն է,
- մասնակի բեռնվածք (արտահայտված %-ով)՝ պարբերաբար կամ արդյունավետ ջերմարտադրությունից ցածր արտադրությամբ գործող կաթսայի արդյունավետ ջերմարտադրության հարաբերությունն է նույն արդյունավետ անվանական ջերմարտադրության նկատմամբ,
- կաթսայի ջրի միջին ջերմաստիճան՝ կաթսայի մուտքում և ելքում ջրի միջին ջերմաստիճանը,
- ստանդարտ կաթսա՝ կաթսա, որի համար ջրի միջին ջերմաստիճանը ըստ նախատեսվածի կարող է սահմանափակվել,
- կրկնակի ջրատաքացնող կաթսա՝ կենտրոնական ջեռուցման համակարգին մատակարարելու և որպես ջրատաքացուցիչ կաթսայի կամ գազօջախի համակցության մի մաս կրակարանի հնոցում տեղադրվելու համար նախատեսված կաթսա,
- ցածր ջերմաստիճանով աշխատող կաթսա՝ կաթսա, այդ թվում՝ հեղուկ վառելիքով աշխատող կոնդենսացիոն կաթսաներ, որոնք կարող են շարունակաբար աշխատել 35-

ից 40 օC ջրամատակարարման ջերմաստիճանով, ինչը կարող է որոշակի պայմաններում առաջացնել կոնդենսացում,

- կոնդենսացիոն կաթսա՝ արտանետված գազերում պարունակվող ջրային գոլորշու մեծ մասը մշտապես կոնդենսացնելու համար նախատեսված կաթսա,
- բնակելի տարածքներում տեղակայվելու համար նախատեսված կաթսա՝ 37 կՎտ-ից ցածր արդյունավետ անվանական ջերմարտադրությամբ կաթսա, որը նախատեսված է ձգողական շրջապտույտի օգտագործմամբ տաք ջուր մատակարարող բաց դիֆուզիոն խուց ունեցող պատյանից արտանետվող ջերմության միջոցով բնակելի տարածքի այն մասին ջերմություն ապահովելու համար, որտեղ այն տեղակայված է:

Հոդված 3

1. Սույն Հրահանգից բացառվում են՝

- տարբեր, այդ թվում՝ պինդ վառելիքներով աշխատելու հնարավորությամբ ջրատաքացուցիչ կաթսաները
- սարքավորումները՝ նախատեսված տաք ջրի ակնթարթային ստացման համար
- կաթսաները՝ նախատեսված այնպիսի վառելիքներով աշխատելու համար, որոնց հատկանիշները զգալիորեն տարբեր են սովորաբար շուկայահանված հեղուկ և գազային վառելիքների հատկանիշներից (արտանետվող արդյունաբերական գազ, բիոգազ և այլն),
- վառարանները կամ սարքվածքները՝ նախատեսված հիմնականում այն տարածքները ջեռուցելու համար, որտեղ դրանք տեղադրված են, և որպես օժանդակ գործառույթ, կենտրոնական ջեռուցմանն ու սանիտարական նպատակներով տաք ջուր մատակարարելու համար,
- ձգողական շրջապտույտ օգտագործող և բացառապես պահուստային սանիտարական տաք ջրի արտադրության համար նախատեսված 6 կՎտ-ից պակաս անվանական ջերմարտադրությամբ սարքվածքները:

- անհատական արտադրության հիմքերով արտադրված կաթսաները

▼M2

— «Էներգիայի ներքին շուկայում օգտակար ջերմության պահանջարկի հիման վրա ջերմային էներգիայի համակցված արտադրության խթանմանը վերաբերող» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ հրահանգում (14) սահմանված համակցված արտադրության տեղակայանքները,

▼B

2. Տարածքներ ջեռուցելու և սանիտարական տաք ջուր ապահովելու երկակի գործառույթ իրականացնող կաթսաների դեպքում 5(1) հոդվածում նշված արդյունավետության պահանջները վերաբերում են միայն ջեռուցման գործառույթին,

Հոդված 4

▼M1

1. Անդամ պետությունները չեն կարող արգելել, սահմանափակել կամ խոչընդոտել սարքվածքների և կաթսաների իրենց տարածքներում շուկայահանումն ու շահագործումը, եթե դրանք համապատասխանում են սույն Հրահանգի դրույթներին և կրում են 7-րդ հոդվածով նախատեսված սույն Հրահանգի բոլոր դրույթների, այդ թվում՝ 7-րդ և 8-րդ հոդվածներում սահմանված համապատասխանության գնահատման ընթացակարգերի հետ համապատասխանությունը հավաստող «CE» դրոշմակնիք, բացառությամբ Պայմանագրում, այլ հրահանգներում կամ Համայնքի դրույթներում այլ կերպ սահմանված դեպքերի:

▼B

2. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները ապահովելու համար, որ կաթսաները չեն կարող շահագործվել, եթե դրանք չեն բավարարում 5(1) հոդվածում սահմանված արդյունավետության պահանջները և շահագործման համար անհրաժեշտ պայմանները, որոնք անդամ պետությունների կողմից սահմանվում են տեղական կլիմայական պայմանների և շենքերի էներգետիկ ու բնակեցվածության առանձնահատկությունների հիման վրա:

3. Այնուամենայնիվ, երբ ջրատաքացուցիչ և բնակելի տարածքներում տեղադրվելու համար նախատեսված կաթսաները լայնորեն տեղադրվում են սույն Հրահանգի ընդունման պահին,

անդամ պետությունները պետք է շարունակեն լիազորել դրանց շահագործման մեջ դրվելը, եթե և՛ անվանական ջերմարտադրության և՛ 30% մասնակի բեռնվածքի դեպքում դրանց արդյունավետությունը ստանդարտ կաթսաների համար 5(1) հոդվածով սահմանված պահանջներից ցածր չէ ավելի քան 4%-ով:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթների ազդեցությունը պարբերաբար կիրառվում և վերլուծվում է Հանձնաժողովի կողմից 10-րդ հոդվածի համաձայն ներկայացվող զեկույցի մեջ: Այդ իսկ նպատակով անդամ պետությունները Հանձնաժողովին են փոխանցում ցանկացած տեղեկություն, որը պահանջվում է Խորհրդին ներկայացնելու համար այդ հոդվածով առաջարկվող փոփոխությունները՝ նախատեսված Համայնքում կաթսաների էներգաարդյունավետությունը և ազատ տեղաշարժը բոլոր դեպքերում ապահովելու համար:

▼M1

5 ա) Եթե կաթսաները կարգավորվում են այլ հիմնախնդիրներին վերաբերող մյուս հրահանգներով, որոնցով նույնպես նախատեսվում է «CE» համապատասխանության դրոշմակնիքի զետեղումը, ապա վերջինս պետք է ցույց տա նաև տվյալ կաթսաների համապատասխանությունը այդ մյուս հրահանգների դրույթներին:

բ) Այնուամենայնիվ, եթե այս հրահանգներից մեկով կամ մի քանիսով արտադրողին թույլատրվում է անցումային ժամանակաշրջանում ընտրել կիրառվող միջոցառումները, ապա «CE» համապատասխանության դրոշմակնիքը պետք է ցույց տա համապատասխանությունը միայն արտադրողի կողմից կիրառվող հրահանգների դրույթներին: Այս դեպքում, Եվրոպական համայնքների Պաշտոնական տեղեկագրում հրապարակման համաձայն, կիրառվող հրահանգի առանձնահատկությունները պետք է տրվեն Հրահանգով պահանջվող փաստաթղթերի, ծանուցումների և հրահանգների մեջ ու կցվեն կաթսաներին,

▼B

Հոդված 5

1. Կաթսաները պետք է համապատասխանեն հետևյալ օգտակար արդյունավետության պահանջներին.

— անվանական ջերմարտադրությանը, օրինակ՝ գործելով կՎտ-ով արտահայտված **նոմինալ ճնշմամբ**, կաթսայաջրի 70 % միջին ջերմաստիճանով, և

—մասնակի բեռնվածքին, օրինակ՝ աշխատելով 30% մասնակի բեռնվածքով, կաթսայաջրի միջին ջերմաստիճանով, որը տարբերվում է համապատասխան կաթսայի տեսակի

Օգտակար արդյունավետությանը համապատասխանելու պահանջները սահմանված են հետևյալ աղյուսակում.

Կաթսայի տեսակ	Ելքային հզորության տատանման շրջան	Անվանական ջերմարտադրության արդյունավետություն		Մասնակի բեռնվածքի արդյունավետություն	
		Կաթսայաջրի միջին ջերմաստիճան (արտահայտված օC-ով)	Արդյունավետության պահանջներ (արտահայտված %-ով)	Կաթսայաջրի միջին ջերմաստիճան (արտահայտված %-ով)	Արդյունավետության պահանջ (արտահայտված %-ով)
Ստանդարտ կաթսաներ	4 to 400	70	$\geq 84 + 2 \log P_n$	≥ 50	$\geq 80 + 3 \log P_n$
Ցածր ջերմաստիճանով աշխատող կաթսաներ	4 to 400	70	$\geq 87,5 + 1,5 \log P_n$	40	$\geq 87,5 + 1,5 \log P_n$
Գազախտաց նող կաթսաներ	4 to 400	70	$\geq 91 + 1 \log P_n$	30 (2)	$\geq 97 + 1 \log P_n$

(*) Ներառյալ պինդ վառելիքներով աշխատող կոնդենսացիոն կաթսաները

(**) Կաթսայի ջրամատակարարման ջերմաստիճանը

Սույն Հրահանգի պահանջներին առնչվող ներդաշնակեցված ստանդարտներով՝ սահմանված համապատասխան 83/189/ԵԽՀ և 88/182/ԵԽՀ հրահանգների Հանձնաժողովի կողմից կազմված մանդատով, որոշվում են, մասնավորապես, արտադրության և չափման համար վավեր ստուգման մեթոդները: Համապատասխան թույլատրելի շեղումները պետք է ներառվեն արդյունավետության մակարդակների մեջ:

▼M3

▼B

Հոդված 7

1. Անդամ պետությունները ենթադրում են, որ ներդաշնակեցված պահանջներին համապատասխանող կաթսաները, որոնց հաշվառման համարները հրապարակվել են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում և որոնց համար անդամ պետությունները հրապարակել են այս ներդաշնակեցված ստանդարտները փոխատեղող ազգային ստանդարտների հաշվառման համարներ, պետք է համապատասխանեն 5(1) հոդվածում սահմանված արդյունավետության հիմնական պահանջներին: Այսպիսի կաթսաները պետք է կրեն I-ին հավելվածի 1-ին մասում նշված «CE» համապատասխանության դրոշմակնիք, և դրանց պետք է կցվի ԵՀ համապատասխանության հայտարարագիր:

2. Սերիական արտադրության կաթսաների համապատասխանությունը վավերացվում է՝

— հավելված III-ում նկարագրված մոդուլ «Բ»-ին համապատասխան կաթսայի տեսակի արդյունավետության ուսումնասիրությամբ,

— հավելված IV-ում նկարագրված մոդուլներ «Գ», «Դ», «Ե»-ին համապատասխան հաստատված տեսակի նկատմամբ համապատասխանության հայտարարագրով,

Գազային վառելիքով աշխատող կաթսաների արդյունավետության համապատասխանությունը գնահատելու ընթացակարգերը այն ընթացակարգերն են, որոնք կիրառվում են «գազային վառելիքով աշխատող սարքվածքներին վերաբերող անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» 90/396/ԵԽՀ հրահանգով սահմանված անվտանգության պահանջների համապատասխանությունը գնահատելու համար:

3. Առանձին շուկայահանված սարքվածքները շուկայում ցուցադրվելու դեպքում իրենց վրա պետք է կրեն «CE» համապատասխանության դրոշմակնիք և ուղեկցվեն ԵՀ համապատասխանության հայտարարագրով, որում նշվում են 5(1) հոդվածում սահմանված օգտակար արդյունավետության մակարդակին հասնելու համար նախատեսված պարամետրերը:

▼M1

4. Սույն հրահանգի պահանջների նկատմամբ և «CE» դրոշմակնիքի շնորհման վերաբերյալ այլ դրույթներ արտահայտող «CE» համապատասխանության դրոշմակնիքը, ինչպես նաև հավելված I-ում սահմանված նշումները զետեղվում են կաթսաների վրա պարզ տեսանելի, դյուրընթեռնելի և չճնշվող եղանակով: Նմանատիպ արտադրանքի վրա ցանկացած դրոշմակնիքի զետեղումը, որը կարող է «CE» դրոշմակնիքի իմաստի և ձևի հետ կապված շփոթության մեջ գցել երրորդ անձանց, պետք է արգելվի: Ցանկացած այլ դրոշմակնիք կարող է զետեղվել կաթսաների և սարքվածքների վրա, եթե դրանով չի նվազեցվում «CE» դրոշմակնիքի պարզ տեսանելիությունն ու դյուրընթեռնելիությունը:

▼M1

5. ա) Այն դեպքում, երբ անդամ պետությունը կամ լիազոր մարմինը հավաստում է, որ «CE» դրոշմակնիքի զետեղումը ապօրինի է կատարվել, Համայնքում հիմնադրված արտադրողը կամ նրա գործակալը պարտավորվում են կաթսան համապատասխանեցնել «CE» դրոշմակնիքին վերաբերող դրույթներին, և անդամ պետությունների կողմից նախատեսված կանոններով դադարեցնել խախտումը:

բ) Եթե անհամապատասխանությունը չի վերացվում, անդամ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տվյալ արտադրանքի շուկայահանումը կանխելու կամ արգելելու համար, կամ ապահովի, որ այդ արտադրանքը շուկայից դուրս բերվի և այդ մասին համապատասխանաբար տեղեկացնի Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին:

▼B

Հոդված 8

▼M1

1. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին այն մարմինների մասին, որոնց նրանք նշանակել են 7-րդ հոդվածում նշված ընթացակարգերն իրականացնելու համար՝ դրանց վերապահած կոնկրետ աշխատանքների և նախօրոք հանձնաժողովի կողմից նրանց տված նույնականացման համարների հետ միասին նշանակված մարմինների մասին:

Հանձնաժողովը Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակում է լիազոր մարմինների ցուցակը՝ իրենց նույնականացման համարների և այլ աշխատանքների հետ միասին, որոնց համար նրանք լիազորվել են:

Հանձնաժողովը ապահովում է, որ այս ցուցակը անընդհատ թարմացվի:

▼B

2. Անդամ պետությունները հետևում են են V-րդ հավելվածում սահմանված նմանատիպ մարմինների նշանակման նվազագույն չափորոշիչներին: Համապատասխան ներդաշնակեցված ստանդարտներով սահմանված չափորոշիչները բավարարող մարմինները համարվում են այդ հավելվածում սահմանված չափորոշիչներին համապատասխանող մարմիններ:

3. Համապատասխան մարմին լիազորած անդամ պետությունը պետք է կասեցնի լիազորումը, եթե պարզվում է, որ տվյալ մարմինը այլևս չի համապատասխանում 2-րդ ենթապարբերությունում նշված չափորոշիչներին: Այն անմիջապես դրա մասին տեղեկացնում է այլ անդամ պետություններին ու Հանձնաժողովին և կասեցնում լիազորումը:

Հոդված 9

Մինչև 1993 թվականի հունվարի 1-ը անդամ պետությունները ընդունում և հրապարակում են սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ դրույթները: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Նրանք կիրառում են այդ դրույթները 1994 թվականի հունվարի 1-ից:

Անդամ պետությունների կողմից ընդունվելու դեպքում, այդ դրույթները պարունակում են սույն Հրահանգին կատարվող հղումներ կամ նմանատիպ հղում նրանց կցվում է հրապարակման կապակցությամբ: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Մինչև 1997 թվականի դեկտեմբերի 31-ը անդամ պետությունները թույլատրում են այն սարքվածքների շուկայահանումը և շահագործումը, որոնք համապատասխանում են սույն Հրահանգի ընդունման պահին իրենց տարածքներում գործող ազգային կանոններին և սխեմաներին:

Հոդված 10

Սույն Հրահանգի իրականացումից երեք տարի հետո Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին և Խորհրդին ներկայացնում է զեկույց ձեռք բերված արդյունքների վերաբերյալ: Այդ զեկույցին կցվում է սույն Հրահանգում ցանկացած փոփոխություններ իրականացնելու առաջարկները՝ հաշվի առնելով այդ արդյունքներն ու տեխնոլոգիական առաջընթացը:

▼M3

Հոդված 10ա

Սույն Հրահանգը հանդիսանում է կիրարկվող միջոց Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի 2005/32/ԵՀ հրահանգի 15-րդ հոդվածի իմաստով, որով հիմնվում է էներգիա օգտագործող արտադրանքի էկոդիզայնի պահանջներ սահմանելու համար շրջանակը, համապատասխան օգտագործման ժամանակ էներգաարդյունավետության մասին այդ հրահանգի, և կարող է փոփոխվել կամ կորցնել ուժը 2005/32/ԵՀ հրահանգի 19(3) հոդվածին համաձայն:

▼B

Հոդված 11

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:


▼M1

Հավելված 1

**<<CE>> ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇՄԱԿՆԻՔ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՏՈՒԿ
ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐ**

1. «CE» համապատասխանության դրոշմակնիք

«CE» համապատասխանության դրոշմակնիքը բաղկացած է հետևյալ ձևը կրող «CE» սկզբնատառերից՝



— Եթե «CE» դրոշմակնիքը փոքրացվում կամ մեծացվում է, ապա վերոնշյալ նշագրված պատկերի վրա նշված համամասնությունները պետք է պահպանվեն:

— «CE» դրոշմակնիքի տարբեր բաղադրիչները պետք է ունենան էապես միևնույն ուղղահայաց չափը, ինչը չպետք է լինի 5 մմ-ից պակաս:

▼M3 _____

▼B

Հավելված III

Մոդուլ Բ՝ ԵՀ տիպային փորձարկում

1. Այս մոդուլը նկարագրում է ընթացակարգի այն մասը, ըստ որի լիազոր մարմինը հայտնաբերում և հաստատում է, որ նմուշը՝ նախատեսված արտադրության ներկայացուցիչը, բավարարում է հրահանգի համապատասխան դրույթները:

2. ԵՀ տիպային փորձաքննություն իրականացնելու մասին հայտը ներկայացվում է արտադրողի կամ Համայնքում տնտեսական գործունեություն իրականացնող նրա լիազորված ներկայացուցչի կողմից իր կողմից ընտրված լիազորված մարմնին:

Հայտը պետք է պարունակի.

— արտադրողի անունը և հասցեն և, եթե դիմումը ներկայադրվել է լիազորված ներկայացուցչի կողմից, նաև վերջինիս անունը և հասցեն,

— գրավոր հայտարարագիր այն մասին, որ նույն հայտը չի ներկայացվել որևէ այլ լիազորված մարմնի,

— 3-րդ կետում նկարագրված տեխնիկական փաստաթղթերը

Հայտատուն լիազորված մարմնին է ներկայացնում նախատեսված արտադրանքի փորձնական նմուշը, որն այսուհետ կոչվում է «տիպային նմուշ»: Լիազորված մարմինը կարող է պահանջել լրացուցիչ նմուշներ, եթե դրանք անհրաժեշտ են փորձարկումներն իրականացնելու համար:

3. Տեխնիկական փաստաթղթերը պետք է հնարավորություն տան գնահատել տվյալ արտադրանքի համապատասխանությունը սույն Հրահանգի պահանջներին: Դրանք պետք է, որքանով անհրաժեշտ է տվյալ գնահատման համար, պարունակեն արտադրանքի դիզայնի, արտադրության և գործարկման մասին տեղեկություններ, ինչպես նաև որքանով անհրաժեշտ է գնահատման համար, պարունակեն՝

— արտադրանքի տարատեսակի ընդհանուր նկարագիրը,

— նախագծի գաղափարը և արտադրանքի բաղադրիչների, ենթամասերի, սխեմաների

արտադրական գծագրեր, գծապատկերներ և այլն,

— արտադրանքի գծագրերն ու գծապատկերները և դրա գործարկումը հասկանալու համար անհրաժեշտ նկարագրեր ու բացատրություններ,

—5(2) հոդվածում նշված՝ ամբողջությամբ կամ մասամբ կիրառված ստանդարտների ցանկը և այն որոշումների նկարագրերը, որոնք ընդունվել են սույն Հրահանգի հիմնական պահանջները բավարարելու համար, եթե 5-րդ հոդվածում նշված ստանդարտները չեն կիրառվել,

—դիզայնի հաշվարկների, իրականացված փորձարկումների և այլնի արդյունքները,

—փորձարկման հաշվետվությունները

4. Լիազորված մարմինը պետք է.

4.1. փորձաքննության ենթարկի տեխնիկական փաստաթղթերը, հաստատի, որ տվյալ տիպային նմուշը արտադրվել է տեխնիկական փաստաթղթերին համապատասխան և սահմանի այն տարրերը, որոնք նախագծվել են 5(2) հոդվածում նշված ստանդարտների վերաբերյալ համապատասխան դրույթների համաձայն, ինչպես նաև այն բաղադրիչները, որոնք նախագծվել են առանց դրանց կիրառման,

4.2. իրականացնի կամ իրականացրած լինի համապատասխան ուսումնասիրություններ և անհրաժեշտ փորձարկումներ՝ ստուգելու համար թե արտադրողի կողմից ձեռնարկված լուծումները բավարարում են հրահանգի հիմնական պահանջները այն դեպքում, երբ 5(2) հոդվածում նշված ստանդարտները չեն կիրառվել,

4.3. իրականացնի կամ իրականացրած լինի համապատասխան ուսումնասիրություններ և անհրաժեշտ փորձարկումներ՝ստուգելու համար, թե արդյոք արտադրողի կողմից համապատասխան ստանդարտներ կիրառելու որոշում կայացնելու դեպքում վերջիններս իրականում կիրառվել են,

4.4. հայտատուի հետ համաձայնեցնի փորձաքննության և անհրաժեշտ փորձարկումների անցկացման վայրը

5. Եթե տիպային նմուշը բավարարում է սույն Հրահանգի համապատասխան դրույթների

պահանջները, ապա լիազորված մարմինը հայտատուին շնորհում է ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագիր: Հավաստագիրը ներառում է արտադրողի անունը և հասցեն, փորձաքննության եզրակացությունը և հաստատված տիպային նմուշի նույնականացման համար անհրաժեշտ տվյալները:

Տեխնիկական փաստաթղթերի համապատասխան մասի ցուցակը կցվում է հավաստագրին, իսկ դրա պատճենը պահվում է լիազորված մարմնի մոտ

Համայնքում տնտեսական գործունեություն իրականացնող արտադրողին կամ իր լիազոր ներկայացուցչին տիպային նմուշի փորձարկման հավաստագրի մերժման դեպքում լիազորված մարմինը պետք է մանրամասն պատճառաբանի մերժումը: Բողոքարկման ընթացակարգի համար պետք է դրույթ սահմանվի:

6. Դիմողը ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրին վերաբերող տեխնիկական փաստաթղթերը տնօրինող լիազորված մարմնին տեղեկացնում է հաստատված սարքվածքի ցանկացած փոփոխության մասին, որի համար պետք է ստանալ լրացուցիչ հաստատում, եթե այդ փոփոխությունները կարող են ազդել հիմնական պահանջների հետ համապատասխանության կամ արտադրանքի օգտագործման սահմանված պահանջների վրա: Այս լրացուցիչ թույլտվությունը տրվում է որպես նախորդ ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրի լրացում:
7. Յուրաքանչյուր լիազոր մարմին տեղեկացնում է այլ լիազոր մարմիններին տրամադրված կամ մերժված ԵՀ տիպային փորձարկման վկայագրերի կամ դրանց լրացումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության մասին:
8. Այլ լիազորված մարմինները կարող են ստանալ ԵՀ տիպային փորձաքննության հավաստագրի և (կամ) դրանց լրացումների պատճենները:
9. Համայնքում տնտեսական գործունեություն իրականացնող արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը պետք է ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրերի և դրանց լրացումների պատճենները պահի տեխնիկական փաստաթղթերի հետ միասին՝

տվյալ արտադրանքի արտադրության վերջին ամսաթվից հետո առնվազն 10 տարի:

Եթե արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը տնտեսական գործունեություն չի իրականացնում Համայնքում, ապա տեխնիկական փաստաթղթերը պահելու պարտականությունն ընկնում է Համայնքում արտադրանքը շուկայահանող անձի վրա:

Հավելված IV

Մոդուլ «Գ». Համապատասխանությունը տիպային նմուշին

1. Այս մոդուլը նկարագրում է ընթացակարգի այն մասը, ըստ որի Համայնքում տնտեսական գործունեություն իրականացնող արտադրողը կամ իր լիազորված ներկայացուցիչը ապահովում և հայտարարում է, որ տվյալ սարքվածքները համապատասխանում են ԵՀ տիպային նմուշի փորձարկման հավաստագրում նշված տիպային նմուշին և բավարարում սույն Հրահանգի՝ դրանց նկատմամբ կիրառվող պահանջները: Արտադրողը կամ Համայնքում տնտեսական գործունեություն իրականացնող նրա լիազոր ներկայացուցիչը պետք է «CE» դրոշմակնիքը դնի յուրաքանչյուր սարքվածքի վրա և կազմի համապատասխանության գրավոր հայտարարագիր:
2. Արտադրողը պետք է անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկի ապահովելու համար, որ արտադրության պրոցեսը պահպանում է արտադրվող սարքվածքների համապատասխանությունը ԵՀ տիպային փորձարկման հավաստագրի մեջ նշված տեսակի և հրահանգի արդյունավետության պահանջների հետ:
3. Արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը պետք է պահի համապատասխանության հայտարարագրի պատճենը տվյալ արտադրանքի արտադրության վերջին ամսաթվից հետո առնվազն 10 տարի: Եթե արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը տնտեսական գործունեություն չի իրականացնում Համայնքում, ապա տեխնիկական փաստաթղթերը պահելու պարտականությունն ընկնում է Համայնքում արտադրանքը շուկայահանող անձի վրա:
4. Լիազորված մարմինը, որն ընտրվել է արտադրողի կողմից, պետք է իրականացնի կամ իրականացրած լինի արտադրանքի պարբերական փորձաքննություններ: Վերջնական արտադրանքի համապատասխան նմուշը, որը վերցվում է լիազորված մարմնի կողմից արտադրության վայրում, ենթարկվում է փորձաքննության, ինչպես նաև անցկացվում

են 5(2) հոդվածում նշված կիրառելի ստանդարտի կամ ստանդարտներով սահմանված կամ համարժեք փորձարկումներ՝ տվյալ Հրահանգի պահանջների հետ արտադրանքի համապատասխանությունը ստուգելու նպատակով: Եթե ստուգված ապրանքներից մեկը կամ մի քանիսը չեն համապատասխանում պահանջներին, ապա լիազորված մարմինը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ:

Մոդուլ «Դ». Արտադրանքի որակի ապահովում

1. Այս մոդուլը նկարագրում է այն ընթացակարգը, համաձայն որի 2-րդ կետով սահմանված պարտավորությունները բավարարող արտադրողը ապահովում և հայտարարում է, որ տվյալ սարքվածքները համապատասխանում են ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրում նշված տիպային նմուշին և բավարարում սույն Հրահանգի պահանջները:

►M1 Արտադրողը կամ Համայնքում տնտեսական գործունեություն իրականացնող նրա լիազոր ներկայացուցիչը պետք է «CE» դրոշմակնիքը դնի յուրաքանչյուր սարքվածքի վրա և կազմի համապատասխանության գրավոր հայտարարագիր: «CE» համապատասխանության դրոշմակնիքի հետ մեկտեղ արտադրանքի վրա զետեղվում է 4-րդ կետում նշված ստուգումների համար պատասխանատու լիազորված մարմնի նույնականացման համարը:

2. Արտադրողը արտադրության համար պետք է կիրառի հաստատված որակի կառավարման համակարգ, իրականացնի 3-րդ բաժնում նշված վերջնական սարքվածքի ստուգում և փորձարկում: Արտադրանքը ենթակա է 4-րդ բաժնում նշված ստուգումների:

3. Որակի կառավարման համակարգ

3.1. Արտադրողը տվյալ սարքվածքի որակի կառավարման իր համակարգը գնահատելու նպատակով հայտ է ներկայացնում իր կողմից ընտրված լիազորված

մարմնին:

Հայտը պետք է պարունակի.

—նախատեսված սարքվածքի կատեգորիայի համար համապատասխան ամբողջ տեղեկատվությունը,

— որակի կառավարման համակարգին վերաբերող փաստաթղթերը,

— հաստատված տիպային նմուշին վերաբերող տեխնիկական փաստաթղթերը և ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրի պատճենը:

3.2. Որակի կառավարման համակարգը պետք է ապահովի սարքվածքների համապատասխանությունը ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրում նշված տիպային նմուշին և սույն Հրահանգի՝ դրանց նկատմամբ կիրառվող պահանջներին:

Արտադրողի կողմից կիրառվող բոլոր տարրերը, պահանջները և դրույթները պետք է համակարգված և կանոնավոր կերպով ամրագրվեն փաստաթղթերում՝ պաշտոնական հրահանգների, ընթացակարգերի և ցուցումների տեսքով: Որակի կառավարման համակարգի վերաբերյալ փաստաթղթերը պետք է որակի կառավարման ծրագրերի, պլանների, ձեռնարկների և որակի մասին հաշվետվությունների հետևողական մեկնաբանման հնարավորություն ընձեռեն:

Դրանք մասնավորապես պետք է պատշաճ կերպով նկարագրեն՝

—որակի կառավարման նպատակները և արտադրողի կազմակերպական կառուցվածքը, ինչպես նաև սարքվածքների որակի կառավարման մասով արտադրողի կառավարման մարմնի պարտականություններն ու լիազորությունները

—արտադրության, որակի վերահսկման և որակի ապահովման համապատասխան տեխնիկաները, ընթացակարգերը և համակարգված գործողությունները, որոնք պետք է կիրառվեն,

—արտադրությունից առաջ, դրա ընթացքում և հետո կատարվելիք փորձաքննություններն ու փորձարկումները և դրանց իրականացման հաճախականությունը,

—որակի հաշվետվությունները, ինչպես օրինակ վերահսկման հաշվետվությունները և փորձարկման տվյալները, տրամաշափման տվյալները, աշխատակազմի որակավորման հաշվետվությունները և այլն,

—սարքվածքի պահանջվող որակի ապահովումը և որակի կառավարման համակարգի արդյունավետ կիրառումը հսկելու համար անհրաժեշտ միջոցները:

3.3. Լիազոր մարմինը պետք է գնահատի որակի համակարգը որոշելու համար, թե արդյոք այն բավարարում է 3.2 բաժնում նշված պահանջները: Գնահատումն իրականացվում է նշված պահանջներին համապատասխանեցված ստանդարտներով գործող որակի կառավարման համակարգերի համապատասխանությունն ապահովելու տեսանկյունից: Ստուգումներ իրականացնող թիմում պետք է ընդգրկված լինի տվյալ արտադրանքի տեխնոլոգիայի գնահատման փորձ ունեցող առնվազն մեկ անդամ: Գնահատման ընթացակարգը ներառում է ստուգայց արտադրողի տարածք:

Արտադրողին ծանուցում են համապատասխան որոշման մասին: Ծանուցումը պետք է ներառի փորձաքննության եզրակացությունները և պատշաճ կերպով հիմնավորված գնահատման որոշումը:

3.4. Արտադրողը պարտավորվում է կատարել հաստատված որակի կառավարման համակարգից բխող պարտականությունները և պահպանել այն պատշաճ և արդյունավետ մակարդակի վրա:

Արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը որակի կառավարման համակարգը հաստատող լիազորված մարմնին պետք է տեղեկացված պահի որակի կառավարման համակարգում կատարվող ցանկացած փոփոխության մասին: Լիազորված մարմինը պետք է գնահատի առաջարկվող փոփոխությունները և որոշում կայացնի, թե արդյոք որակի կառավարման համակարգը դեռևս կբավարարի 3.2 պարբերությունում նշված պահանջները, կամ թե արդյոք վերագնահատման անհրաժեշտություն կա:

Այն իր ընդունած որոշման մասին պետք է ծանուցի արտադրողին: Ծանուցումը պետք է ներառի փորձաքննության եզրակացությունները և պատշաճ կերպով

հիմնավորված գնահատման որոշումը:

4. Լիազորված մարմնի կողմից իրականացվող հսկողությունը.

4.1. Հսկողության նպատակն է համոզվել, որ արտադրողը պատշաճ կերպով կատարում է հաստատված որակի կառավարման համակարգից բխող պարտավորությունները:

4.2. Արտադրողը պետք է լիազորված մարմնին թույլատրի ստուգումների նպատակով մուտք գործել արտադրության, ստուգման, փորձարկումների և պահեստային տարածքներ, ինչպես նաև պետք է լիազորված մարմնին տրամադրի ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն և մասնավորապես՝

—որակի կառավարման համակարգի վերաբերյալ փաստաթղթերը

—որակի հաշվետվությունները, ինչպես օրինակ վերահսկման հաշվետվությունները և փորձաստուգման տվյալները, տրամաչափման տվյալները, աշխատակազմի որակավորման հաշվետվությունները և այլն,

4.3. Լիազորված մարմինը պետք է պարբերաբար հսկողություն իրականացնի՝ ապահովելու համար, որ արտադրողը պահպանում և կիրառում է որակի կառավարման համակարգը և պետք է ստուգումների մասին հաշվետվություն ներկայացնի արտադրողին:

4.4. Բացի այդ, լիազորված մարմինը կարող է անսպասելի ստուգայցեր կատարել արտադրողի տարածք: Նման այցերի ժամանակ լիազորված մարմինը կարող է անցկացնել փորձարկումներ կամ դրանք հանձնարարել արտադրողին՝ ստուգելու համար, որ որակի կառավարման համակարգը գործի կանոնավոր կերպով. անհրաժեշտության դեպքում, լիազորված մարմինն արտադրողին տրամադրում է ստուգայցի հաշվետվություն, իսկ փորձարկում իրականացնելու դեպքում՝ նաև դրա մասին հաշվետվություն:

5. Արտադրողը արտադրանքի արտադրման վերջին ամսաթվից հետո առնվազն 10 տարի պետք է ազգային մարմիններին կարողանա տրամադրել՝

—3.1 կետի 2-րդ պարբերույթում նշված փաստաթուղթը,

—3.4 կետի 2-րդ պարբերության մեջ նշված թարմացված փաստաթղթերը

— լիազորված մարմնից ստացված որոշումները և հաշվետվությունները, որոնք նշված են 3.4 կետի վերջին պարբերությունում և 4.3 և 4.4 կետերում:

6. Յուրաքանչյուր լիազոր մարմին պետք է այլ լիազոր մարմիններին փոխանցի տրամադրված կամ մերժված որակի համակարգի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն

Մոդուլ <<Ե>>. Արտադրանքի որակի ապահովում

1. Այս մոդուլը նկարագրում է այն ընթացակարգը, համաձայն որի 2-րդ կետով սահմանված պարտավորությունները բավարարող արտադրողը ապահովում և հայտարարում է, որ տվյալ կաթսաները և սարքվածքները համապատասխանում են ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրում նշված տիպային նմուշին: Արտադրողը կամ Համայնքում տնտեսական գործունեություն իրականացնող նրա լիազոր ներկայացուցիչը պետք է «CE» դրոշմակնիքը դնի յուրաքանչյուր կաթսայի և սարքվածքի վրա և կազմի համապատասխանության գրավոր հայտարարագիր: «CE» համապատասխանության դրոշմակնիքի հետ մեկտեղ արտադրանքի վրա պետք է զետեղվի 4-րդ կետում նշված ստուգումների համար պատասխանատու լիազորված մարմնի նույնականացման համարը:
2. Արտադրողը արտադրության համար պետք է կիրառի հաստատված որակի կառավարման համակարգ, իրականացնի 3-րդ բաժնում նշված վերջնական կաթսայի և սարքվածքի ստուգում և փորձարկում: Արտադրանքը պետք է ենթակա լինի 4-րդ բաժնում նշված ստուգումներին:
3. Որակի ապահովման համակարգ
 - 3.1. Արտադրողը իր կաթսաների և սարքվածքների որակի կառավարման համակարգը

գնահատելու նպատակով հայտ է ներկայացնում իր կողմից ընտրված լիազորված մարմին:

Հայտը պետք է պարունակի.

— նախատեսված կաթսայի կամ սարքվածքի կատեգորիայի համար համապատասխան ամբողջ տեղեկատվությունը,

— որակի ապահովման համակարգի վերաբերյալ փաստաթղթեր

— հաստատված տիպային նմուշին վերաբերող տեխնիկական փաստաթղթերը և ԵՀ տիպային նմուշի փորձաքննության հավաստագրի պատճենը:

3.2. Որակի կառավարման համակարգը ենթադրում է, որ յուրաքանչյուր կաթսա կամ սարքվածք ուսումնասիրվում և անցնում է 5-րդ հոդվածում նշված համապատասխան չափանիշով կամ չափանիշներով սահմանված փորձարկումներ կամ համարժեք փորձարկումներ՝ սույն Հրահանգի համապատասխան պահանջների հետ դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով: Արտադրողի կողմից կիրառվող բոլոր տարրերը, պահանջները և դրույթները պետք է համակարգված և կանոնավոր կերպով ամրագրվեն փաստաթղթերում՝ պաշտոնական հրահանգների, ընթացակարգերի և ցուցումների տեսքով: Որակի կառավարման համակարգի վերաբերյալ փաստաթղթերի վարումը պետք է հնարավորություն ընձեռի հետևողականորեն մեկնաբանելու որակի կառավարման ծրագրերը, պլանները, ձեռնարկներն ու գրանցամատյանները:

Դրանք մասնավորապես պետք է պատշաճ կերպով նկարագրեն՝

— որակի կառավարման նպատակները և արտադրողի կազմակերպական կառուցվածքը, ինչպես նաև արտադրանքի որակի կառավարման մասով արտադրողի կառավարման մարմնի պարտականություններն ու լիազորությունները,

— արտադրությանը հաջորդող փորձաքննությունն ու փորձարկումները,

— որակի կառավարման համակարգի արդյունավետ գործունեությունը հսկելու միջոցները,

— որակի հաշվետվությունները, ինչպես օրինակ վերահսկման հաշվետվությունները և փորձաստուգման տվյալները, տրամաշափման տվյալները, աշխատակազմի որակավորման հաշվետվությունները և այլն,

3.3. Լիազորված մարմինը պետք է գնահատի որակի կառավարման համակարգը՝ որոշելու համար, թե արդյոք այն բավարարում է 3.2 կետում նշված պահանջները: Գնահատումն իրականացվում է նշված պահանջներին համապատասխանեցված ստանդարտներով գործող որակի կառավարման համակարգերի համապատասխանությունն ապահովելու տեսանկյունից: Ստուգումներ իրականացնող թիմում պետք է ընդգրկված լինի տվյալ արտադրանքի տեխնոլոգիայի գնահատման փորձ ունեցող առնվազն մեկ անդամ: Գնահատման ընթացակարգը պետք է ներառի ստուգայց արտադրողի տարածք:

Արտադրողը պետք է ծանուցվի համապատասխան որոշման մասին: Ծանուցումը պետք է ներառի փորձաքննության եզրակացությունները և պատշաճ կերպով հիմնավորված գնահատման որոշումը:

3.4. Արտադրողը պարտավորվում է կատարել հաստատված որակի կառավարման համակարգից բխող պարտականությունները և պահպանել այն պատշաճ և արդյունավետ մակարդակի վրա:

Արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը որակի կառավարման համակարգը հաստատող լիազորված մարմնին պետք է տեղեկացված պահի որակի կառավարման համակարգում ցանկացած առաջարկվող փոփոխության մասին:

Լիազորված մարմինը պետք է գնահատի առաջարկվող փոփոխությունները և որոշում կայացնի, թե արդյոք որակի կառավարման համակարգը դեռևս կբավարարի պարբերություն 3.2-ում նշված պահանջները, կամ թե արդյոք վերագնահատման անհրաժեշտություն կա:

Այն իր ընդունած որոշման մասին պետք է ծանուցի արտադրողին: Ծանուցումը պետք է ներառի փորձաքննության եզրակացությունները և պատշաճ կերպով հիմնավորված գնահատման որոշումը:

4. Լիազորված մարմնի կողմից իրականացվող հսկողությունը.

4.1. Հսկողության նպատակն է համոզվել, որ արտադրողը պատշաճ կերպով կատարում է հաստատված որակի կառավարման համակարգից բխող պարտավորությունները:

4.2. Արտադրողը պետք է լիազորված մարմնին թույլատրի ստուգումների նպատակով մուտք գործել ստուգման, փորձարկումների և պահեստային տարածքներ, ինչպես նաև պետք է լիազորված մարմնին տրամադրի ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն և մասնավորապես՝

— Որակի կառավարման համակարգի վերաբերյալ փաստաթղթեր

— տեխնիկական փաստաթղթերը,

— որակի հաշվետվությունները, ինչպես օրինակ վերահսկման հաշվետվությունները և փորձաստուգման տվյալները, տրամաչափման տվյալները, աշխատակազմի որակավորման հաշվետվությունները և այլն,

4.3. Լիազորված մարմինը պետք է պարբերաբար հսկողություն իրականացնի՝ ապահովելու համար, որ արտադրողը պահպանում և կիրառում է որակի կառավարման համակարգը և պետք է ստուգումների մասին հաշվետվություն ներկայացնի արտադրողին:

4.4. Բացի այդ, լիազորված մարմինը կարող է անսպասելի ստուգայցեր կատարել արտադրողի տարածք: Նման այցերի ժամանակ լիազորված մարմինը կարող է անցկացնել փորձարկումներ կամ դրանք հանձնարարել արտադրողին՝ ստուգելու համար, որ որակի կառավարման համակարգը գործի կանոնավոր կերպով. անհրաժեշտության դեպքում, լիազորված մարմինն արտադրողին տրամադրում է ստուգայցի հաշվետվություն, իսկ փորձարկում իրականացնելու դեպքում՝ նաև դրա մասին հաշվետվություն:

5. Արտադրողը կաթսայի կամ սարքվածքի արտադրման վերջին ամսաթվից հետո առնվազն 10 տարի պետք է ազգային մարմիններին կարողանա տրամադրել՝

— 3.1 կետի 3-րդ պարբերությունում նշված փաստաթղթերը,

— 3.4 կետի 2-րդ պարբերությունում նշված փոփոխություններին վերաբերող փաստաթղթերը,

— լիազորված մարմնից ստացված որոշումները և հաշվետվությունները, որոնք նշված են 3.4 կետի վերջին պարբերությունում և 4.3 և 4.4 կետերում:

6. Յուրաքանչյուր լիազոր մարմին պետք է այլ լիազոր մարմիններին փոխանցի տրամադրված կամ մերժված որակի համակարգի վկայագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

Հավելված V

Համապատասխան մարմիններին լիազորելու համար անդամ պետությունների կողմից հաշվի առնվելիք նվազագույն չափորոշիչները

1. Համապատասխանության հավաստման համար պատասխանատու մարմինը, դրա տնօրենը և անձնակազմը չպետք է հանդիսանան իրենց կողմից ստուգվող սարքվածքների նախագծողը, արտադրողը, մատակարարը կամ տնօրինողը, ոչ էլ այս անձանցից որևէ մեկի լիազոր ներկայացուցիչը: Նրանք անմիջականորեն կամ որպես լիազոր ներկայացուցիչ չպետք է ներգրավված լինեն այդ կաթսաների և սարքվածքների նախագծման, արտադրության, շուկայահանման կամ շահագործման գործընթացում: Սա չի սահմանափակում արտադրողի և համապատասխան մարմնի միջև տեխնիկական տեղեկությունների փոխանակման հնարավորությունը:

2. Մարմինն ու դրա անձնակազմը համապատասխանության հավաստման փորձարկումներն իրականացնում են մասնագիտական ազնվությամբ և տեխնիկական իրազեկության պարագայում, ազատ են ճնշումներից և չունեն շարժառիթներ՝ մասնավորապես ֆինանսական, որը կարող է ազդել իրենց գնահատումների ստուգման արդյունքների վրա, հատկապես այն անձանցից կամ անձանց խմբերից, որոնք շահագրգռված են հավաստման արդյունքներում:

3. Մարմինը պետք է ունենա համապատասխան անձնակազմ և անհրաժեշտ սարքավորումներ՝ հավաստմանն առնչվող վարչական և տեխնիկական գործառույթներն իրականացնելու համար. այն պետք է կարողանա օգտվել հատուկ հավաստման աշխատանքների համար անհրաժեշտ սարքավորումներից:

4. Ստուգումներ իրականացնող անձնակազմը պետք է՝

— անցած լինի արդյունավետ տեխնիկական և մասնագիտական ուսուցում,

— տիրապետի իրականացվող փորձարկումների պահանջներին բավարար գիտելիքներին և ունենա դրանց անցկացման համապատասխան փորձ,

— կարողանա կազմել փորձարկումների իրականացումը վավերացնող հավաստագրեր, տվյալների մասին գրառումներ և հաշվետվություններ:

5. Ստուգումներ իրականացնող անձնակազմի անաչառությունը պետք է երաշխավորված լինի: Նրանց վարձատրությունը չպետք է կախված լինի իրականացվող փորձարկումների քանակից կամ նման փորձարկումների արդյունքներից:

6. Մարմինը պետք է կրի պատասխանատվություն, եթե այն չի ապահովվում պետության կողմից ազգային իրավունքին համապատասխան, կամ եթե անդամ պետությունն ինքն է անմիջական պատասխանատվություն կրում փորձարկումների համար:

7. Լիազորված մարմնի անձնակազմը (բացառությամբ իր գործունեության վայր հանդիսացող անդամ պետության իրավասու վարչական մարմինները) պարտավոր է մասնագիտական գաղտնիություն պահպանել՝ սույն Հրահանգի կամ այն գործողության մեջ դնող ազգային իրավունքի ցանկացած դրույթի համաձայն:

(1) ՊՏ թիվ C 292, 22.11.1990թ., էջ 8:

(2) ՊՏ թիվ C 129, 20.05.1991թ., էջ 97 և ՊՏ թիվ C 94, 13.04.1992թ.:

(3) ՊՏ թիվ C 102, 18.04.1991 թ., էջ 46:

(4) ՊՏ թիվ L 307, 08.11.1991 թ., էջ 34:

(5) ՊՏ թիվ C 20, 22.01.1985 թ., էջ 1:

(6) ՊՏ թիվ C 241, 25.09.1986 թ., էջ 1:

(7) ՊՏ թիվ C 183, 20.07.1989թ., էջ 4:

(8) ՊՏ թիվ L 52, 23.02.1978 թ., էջ 32: 82/885/ԵԽՀ հրահանգով(ՊՏ թիվ L 378, 31.12.1982թ., էջ 19) փոփոխված Հրահանգ

(9) ՊՏ թիվ C 136, 04.06.1985թ., էջ 1:

(10) ՊՏ թիվ L 109, 26.04.1983թ., էջ 8; վերջին անգամ 90/230/ԵԽՀ (ՊՏ թիվ L 128, 18.05.1990թ., էջ 15)որոշմամբ փոփոխված հրահանգ:

(11) ՊՏ թիվ L 380, 31.12.1990թ., էջ 13:

(12) ՊՏ թիվ L 40, 11.02.1989թ., էջ 12:

(13) ՊՏ թիվ L 196, 26.07.1990թ., էջ 15:

(14) ՊՏ L 52, 21.02.2004թ., էջ 50:

(15) ՊՏ թիվ L 81, 26.03.1988թ., էջ 75:

(16) ՊՏ L 191, 22.07.2005թ., էջ 29: